«ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ՄԵՐԿՈՒԹՅՈՒՆ Է...»

Հարցազրույցներից մեկում Աղասի Այվազյանը ասել է. «Կա երկու վերաբերմունք՝ ես կարդում եմ, որ ինձ դուր գա, և ես կարդում եմ, որ սովորեմ ապրել: Դուր գալու, զվարճանալու գրականությունը չի սովորեցնում ապրելու կերպը»:

Թվում է՝ Այվազյանը զրուցում է ընթերցողի հետ՝ զերծ մնալով բարոյախոսական մեկնաբանություններից. Սևակի՝ «պարզ, բայց ոչ հասարակ» լինելու սկզբունքին հավատարիմ: Նա միայն պատկերում է, նկարագրում մարդու հոգեկան աշխարհն ու իրադարձությունները՝ եզրակացությունը թողնելով ընթերցողին: Պարզության մեջ այնքան խորություն կա, աչքի պես պարզ և աչքի պես բարդ արվեստի թումանյանական բնորոշումը գրողի համար դառնում է գրելաձևի նշանաբան: Եվ կռահում ես՝ սա հենց այն գրականությունն է, որ սովորեցնում է ապրելու կերպը: Այվազյանն ընդգծում է «Կատարյալ գեղագիտության հիմքը՝ պարզ դարձնել ամենաբարդը: Գրականությունը ներքին մերկություն է՝ դու պիտի բացվես ինչպես կաս»:

Գրողի պատմվածքներն ու վիպակները, էսսեներն ու պիեսները բազմաբնույթ են, ունեն լայն ընդգրկում: Տարբեր են հերոսները, ժամանակաշրջանը, թեմատիկան: Երգիծանքը խառնվում է ցավին, հեգնանքը՝ ափսոսանքին, հույզը՝ բանականությանը: Առաջատարը անհատի կամքի և ճակատագրի բախումն է: Մարդու մեջ առկա են չարի և բարու սերմեր. մարդասպանն ու արարիչն անընդմեջ բախվում են մարդու հոգում: Այվազյանը երջանկությունը համարում է «ներքին խաղաղության հասնելը»: Բուդդայի երանության հասնելու տենչին՝ «Նիրվանային» է համահունչ այս վիճակը: Սակայն միևնույն է, մեկի ներսում Քրիստոսն է առավել ամուր, մյուսի հոգում՝ Հուդան: Վերջինս, ըստ գրողի, մարդու ներքին պայքարի, ներքին տառապանքի խորհրդանիշն է. «Ուզում են Քրիստոս լինել, բայց բոլորի ներսում էլ պայքար է»: Սա երկընտրանք չէ, այլ էություն: Սա բանականության լուսարձակով մարդու ներաշխարհը ուսումնասիրելու փորձ է:

Կերպարների այն պատկերասրահը, որ մեզ է ներկայացնում գրողը, բազմաբնույթ ու հակասական է: Երգիծանքի քողի տակ անթաքույց ցավն է, ցավի մեջ՝ անհուն սերը: Այդպիսին է և Չարենցի «Երկիր Նաիրին»:

Հոգեկան տագնապի խաչուղիներում դեգերող հերոսներին միավորում է ընդհանուր ողբերգությունը՝ նրանց չեն հասկանում, նրանց ծաղրում են, արհամարհում, նաև՝ անտրտունջ են, կենսասեր, իրենց խաչը լուռ տանող: Չեխովյան «փոքր մարդու» տխուր կենսակերպը հոգեհարազատ է գրողին: Չէ՞

որ Հերմեսի արձանի առջև ծեռքը պարզած Դիոգինես փիլիսոփան, որ անթարթ նայում էր արձանի քարե աչքերին, խորհրդանշում էր կյանքի հարվածներից չտրտնջալու իմաստությունը. «Ուզում եմ վարժվել մերժումներին»: Ահա այդ մերժվածների ցավերով լի ու ոչ սովորական աշխարհն է իր ստեղծագործությունների առանցքը դարձրել Աղասի Այվազյանը: Գրողը, ըստ նրա, ոչ թե բժիշկն է, այլ ցավը, մարդու ներսում խլրտացող սերը և անշոշափելի բարին: Զգացմունքի խտությունից նա էլ իր ծեռնածու հերոսի նման կարող է ամեն ինչ ստեղծել: «Ու դա հրաշք է»: Մի տարբերությամբ միայն, ծեռնածուին չեն հասկանում և ծիծաղում են, որովհետև հրաշքը չեն տեսնում. «Նրանց ֆոկուս էր պետք», իսկ գրողը հոգու գրպանահատ է, դրա կարիքն է զգում մարդը:

«Ոչ միայն հացիվ» շատ է ասվել, բայց Այվազյանը չափազանց անսովոր բան է պատկերել՝ գոյություն «ոչ միայն մարմնիվ», եթե կարելի է այսպես որակել: Բժշկության մեջ աննախադեպ բան էր պատահել, ծախորդ ծննդաբերությունը չէր խանգարել, որ Շուշանիկը շարունակի սիրել իր անտեսանելի բալիկին, օրորել դատարկ օրորոցը, կուրծք տալ դատարկ բարուրին և երջանիկ լինելը բացատրել այսպես. «Իմ բալիկը մարմին չունի»: Ապշահար բժիշկները, որոնք սկզբում «հոգեկան տրավմա» էին բնութագրել այդ հիրավի անսովոր երևույթը, ստիպված էին նահանջել. «Ով գիտե... Գուցե ինչ-որ ճիշտ բան կա... նա հոգի է ծնել»: «Հոգի ծնող» այս կնոջ զավակները Թիֆլիսի ծուռտիկ-մուռտիկ փողոցներում են, կամուրջների տակ: Նրանք պատրաստ են կիսել ծեր վիշտը, տառապանքը, միայն թե գաղափար չունեն առարկայի ռեալությունից, նյութն ու ապրանքը խորթ են նրանց: Սակայն այս արտասովոր մարդիկ «ծեզ կասեն ամենաբարդ և ամենահասարակ բանը՝ ինչպես լինել երջանիկ»: Երջանկությունը շաղկապվում է ազատության հետ՝ հաստատելով Մ.Գորկու խոսքը. «Ազատ մարդն Աստված է»: Սա առանցքային հարց է գրողի համար:

Պայծառ հիշողության կրողը մանկության քաղաք Թիֆլիսն է: Փոքրիկ, սքանչելի պատմվածքներ են՝ լեզվական ճոխությամբ, անձնավորման կենարար շնչով, լեցուն անհուն սիրով դեպի քաղաքի մարդիկ, փողոցները, բարբառը: Ահա մի օրինակ՝ նախշուն բաղնիքի նկարագրությունը. *«Պճնազարդ ու խատուտիկ, թարթիչներին սուրմա քաշած, կապտագույն աչքերը կոպերի տակ, ծանր հետույքը ցեխաջրում, կլկլոցը աղիքների մեջ Նախշուն բաղնիքը նստել է Թուրքի մեյդանում»:* Պատկերավոր խոսքը Աղասի Այվազյանի ստեղծագործության անբաժանելի տարրն է: Պատմվածքներն ասես արձակ բանաստեղծություններ լինեն: Հենց այդ «Նախշուն բաղնիքը» պատմվածքում կանացի մարմնի, գոլորշու, գաղտնախորհուրդ խոսքերի միահյուսումը վկայում են մեծ արվեստագետի հոգեսուզման կարողությունը, աննշան դեմքերն ու դեպքերը անմոռանալի դարձնում ընթերցողի հիշողության մեջ: «Հավերժության թշնամի և պահի արարիչ» մարմինները ափիբերան լսում են գնդապետի բարեմասնու-

թյունների գովքը, իսկ «գոլորշին հավաքում էր փեշերը, թանձրանում, ծածկում դուռն ու առաստաղը»: Ներողամիտ սիրով է խոսում հեղինակը կանացի միամիտ խորամանկությունների մասին: Իսկ Թիֆլիսն ու Հավլաբարը ոչ միայն հարազատության շունչ ունեն, այլև կարող են տխրել, դարդ անել, խռովել ու ժպտալ: Այստեղ սերը անձնազոհ է, անհուն և ափսոսանքով լի. անցածը վերադարձնել չի լինի այլևս: Հոգու մի անկյունում ննջում է կարոտը, և այդ կարոտի արթնացումից թպրտում է սիրտը:

«Գիտակցությունն ու ենթագիտակցությունը միշտ էլ միասին են, ու թե ո՞րն է առավել ուժեղ, ամենևին էլ մեր լուծելու խնդիրը չէ: Մենք շատ ենք փոքր»: Այսպես է մտածում Այվազյանը՝ իբրև հոգեբան, իբրև փիլիսոփա: Մարդկային միտքը միշտ էլ ճգնել է հասկանալ տիեզերքի անեզրության առեղծվածը, սակայն անսահմանը դարձել է մարդու մտքի սահմանը: Գիտակցությունը նահանջել է՝ ամեն ինչ բացատրելը համարելով անկարելի: Ինչ-որ չեն կարողացել հասկանալ, վերագրել են ենթագիտակցությանը, որը նույքան առեղծվածային է, որքան տիեզերքը:

«Պուճուր մի տեղ Բուդդայի կողքին» պատմվածքը ենթագիտակցության զոհ դարձած մարդու ողբերգությունն է, մարդ, որ մանկությունից տառապում է անլիարժեքության բարդույթով: Նա ուրիշներին միշտ ավելի էր հարգում ու սիրում, քան իրեն: Ոչինչ չէր օգնում, թեև հայրը նրա գիտակցության մեջ ուզում էր մտցնել «Ես եմ, որ կամ»-ի ինքնահաստատումը: Անզոր էր նույնիսկ ամենազոր փողը, որ հայրը թափում էր տղայի գլխին՝ փորձելով նրան ինքնավստահ ու մեծամիտ դարձնել: «Հիվանդութո՞ն էր, ինչ էր... ես եմ, որ կամ-ը «տրաքում էր խուրմայի փչած տոպրակի նման»: Եվ երբ հյուրանոցի երկու սենյակներից տղան ինքնակամ ընտրում է մեկը,որն ավելի սրտամոտ է իրեն, իր ճաշակին, պատահաբար պարզվում է ճակատագրականը.«Ասես երկաթյա մի ճանկ վեր հանեց աշխարհի քողը: Նա հասկացավ, որ այդ սենյակի պես սենյակը նախատեսված է ծառայի համար, բայց ինքն է ընտրել: ԻՆՔԸ»: Սա ենթագիտակցության անընմբռնելի ուժին գերի լինե՞լն է, նախախնամության դեմ մարդու անզորության փա՞ստ, թե...

Գրողը «Նեգրոնք» պատմվածքի հերոսի՝ Տարիելի միջոցով այսպես է մեկնաբանում մարդու ճակատագիրը.«Մարդու մեջ ի սկզբանե ծրագրավորված-ագուցված է կյանքի մանրակերտը, որ ընդհանուր է բոլորի համար, մնացածը՝ կրթությունը, ծագումը փոշու նման են, քամին բերում է և քամին էլ տանում է»: Այնուամենայնիվ, ամենամեծ հրաշքը, ըստ Այվազյանի, մարդու կյանքն է, նրա զորությունը, ապրելը, նաև տառապանքը: Պատմվածքներից մեկում («Սովորական մարդու գինը») ամեն ինչ կորցրած հերոսը, որն իրավամբ կարող է մարգարեի նման ասել.«Ես այն մարդն եմ, որ տեսա տառապանքը», չի կորցրել հոգու բարությունը: Մահվան մահճում Ավետիսը խնդրում է իր քրոջ

աղջկան՝ միակ հարազատին, որը հայրենիքից կտրված է արմատապես. չգիտի հայերեն, ամուսնացած է ֆրանսիացու հետ.

-Լյուսի ջան, օղուլ...կունենաս զավակներ, կըսես իրենց, որ եթե պատահին հայեր կյանքին ճամփուն վրա, թող լավ վերաբերվին անոնց, թող օգնեն...Սեպե, որ ինձի համար կընես...Ուզածս միայակ ատ է:

-Bien,-ասաց Լյուսի Խրիզոսկանոն:

Ու հանգավ Ավետիսը՝ հեշտ ու խաղաղ»:

Պատմվածքն ավարտվում է, բայց մնում է ցավը ընթերցողի հոգում: Հեղինակը այդպես էլ գրել է. «Գրականությունն ամբողջ կյանքում ուղեղիդ մեջ պտտվող տառապանքի մի մասի գրավոր արգասիքն է: Գրողը պիտի ունենա մարդու տառապանքը, ինչպես բժիշկը՝ հիվանդի, որպեսզի կարողանա բժշկել»: Աղասի Այվազյանի շատ հերոսներ ավանդական հայկական մտածողություն ունեն, սակայն մեր դժբախտությունը՝ ցեղի թափառող արյունը, նրանց նետել է կյանքի հորձանուտը, և «տարածության ագահությունը» կլանել է բոլորին՝ Հովակիմի որդի Եսայուն, Նեգրոնց Ռոստոմին, Մարտիրոսին: Ցավալի է, բայց մեր թշնամիներն էլ գիտեն, որ մեր «պորտը Եվրոպաներում ենք կտրել»: Աշխարհով մեկ թափառող Մարտիրոսը աղջկան հայտնում է, որ ինքը տուն ունի: «Էլ ո՞ւր էիր գնում»,- հեշտ ասաց նա: Չգիտեր՝ ուր է գնում, բայց համառորեն թափառում էր աշխարհով մեկ, թեև ոտքերի երակներն ուռել էին, մկանները՝ մաշվել, ներբանները՝ կոշտացել: Շահնուրի՝ առանց վշտի ապրել չկարողացող «հայու լակոտն է» սա: Դադար չունեցող հայի մի կերպար, որը չունի ապագա, քանզի չունի հայրենիք: «Իմ ճամփան տխուր է»,-ասում է Արմինուսը, և այդ «տխուր» բառը ընդգրկում է ավելին, քան ասվում է:

«Ես չգիտեմ ծնունդն է ավելի ողբերգական, թե մահը, կարևորը մարդու բարոյական ընթացքն է»: Սա գուցե հենց այն ուղենիշ ծառայող փարոսն է, որով արձակագիրը փորձում է բացահայտել ոչ միայն ազգային, այլև սկզբունքային դիրքորոշման, կյանքում իր տեղը գտած և խղճի ձայնի ունկնդիր մարդու էությունը, կոչ է անում կարճատև կյանքում բարի անուն թողնելու, Թումանյանի պես գործի անմահության մասին մտահոգվելու, միմյանց օգնելու և սիրելու: Ստեղծագործելու համար նա անհրաժեշտ է համարում ազատության ձեռքբերումը՝ ներքին և արտաքին: Սա շատ կարևոր է, քանզի «մենք մեր անմահությունը փնտրում ենք գրականության մեջ՝ խոսքը ճշմարտության մասին է»:

Այդ ազատության շունչն է թևածում նրա գործերում, որոնք կյանքային են, մարդկային, դրանով իսկ՝ անմահ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղասի Այվազյան - «ԴԻՊԼԻՊԻՏՈ», «Սովետական գրող» հրատ., Երևան, 1985թ.:
2. Աղասի Այվազյան - Ընտիր երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1987թ.: